

7424

53(07)

IN-26

05 JUL 2010
19 AUG 2006

ԱՍԽՀ

ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԱՏ

ՈՒՍՈՒՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵՎՏՈՐ

ՏԱՐՐԱԿԱՆ

ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ

ԴՊՐՈՑԻ

ԾՐԱԳՐԵՐ

ՖԻԶԻԿԱ

6-րդ գիրք

53(07)
S-26

ԱԶԵՐՆԵՐ - ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

13.08.2013

53(07)

Ա - 26

Խմբ. Գ. Պետրոսյան

Տեխ. խմբ. Կ. Թառլանջյան

Հանձնաված ե արտադրության 19 մարտի
Ստորագրված ե տպագրության 7 ապրիլի
Տպագրական թերթերի թիվը՝ 2
Տպագրական նշանների թիվը՝ 87.360



7473-53

Baş Mət. Mədirliyi Myyəkkilliği № 1606.

Sifariş 488.

Tirazlı 1000

AZƏRNƏŞR mətbəəsində basıldı.

Bakı, Bolşoj Morskoj və Qrasno-Presnenski küçələrinin tərində, № 16/36

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ

ՄԻՋԱՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՌԹԻՎ

Միջնակարգ դպրոցի համար առաջարկվող Փիզիկայի սույն ծրագիրը կազմված է Համկոմկուսի (թ) Կենտկոմի ոգոստոսի 25-ի «Ուսումնական ծրագրերը և տարրական ու միջնակարգ դպրոցի ռեժիմի մասին» ունեցած վորոշման հիման վրա:

Սույն ծրագրի հիմքում դրված են յեղել Փիզիկայի այն ծրագրերը, վոր հրատարակել ե 1932 թվի հունվարին, Համկոմկուսի (թ) Կենտկոմի 1931 թ. սեպտեմբերի 5-ի «Տարրական ու միջնակարգ դպրոցի մասին» ունեցած վորոշման հիմունքով:

Մի քանի խոսք 1932 թվի հունվարին հրատարակված ծրագրերի մասին: Այդ ծրագրերը կազմելիս վերացված են յեղել մի ամբողջ շարք թերություններ, վոր յեղել են առաջներում հրատարակած ծրագրերում (դասընթացի կառուցումը թեմաներով, Փիզիկայի սիստեմատիկ դասընթացի բացակայությունը, մնացած առարկաների հետ չկապված լինելը, առանձնապես մաթեմատիկայի և քիմիայի հետ, այնպիսի բաժինների բացակայությունն, ինչպիսին ե մոլեկուլար-կինետիկ թեորիան, նյուտոնի որենքների մեկնաբանման բացակայությունը և այլն), սակայն 1932 թվի հունվարյան հրատարակության ծրագրերն ունեցել են մի շարք խոշորագույն թերություններ, վորոնք հիմնականում արտահայտվել են հետևյալում:

Առաջինը՝ Փիզիկայի դասընթացը կատարված է յեղել առանց ողջուղղության հասակային առանձնահատկությունները հաշվի առնելու. որինակ. մեխանիկայի անցումն ամբողջապես տրվել է ուսման վեցերորդ տարրում, վորտեղ այդ հյութը սովորողների համար բացաշահապես ուժից վեր է:

Երեկուցքը՝ ծրագրի նյութը համառոտած է յեղել փոքր ժամանակամիջոցի համար (5, 6 և 7 ուսման տարիներ), վարի հետեանքով չեր կարող դասընթացի խորը, սիստեմատիկ անցումը լիներ: Ուսման յուրաքանչյուր տարի ծանրաբեռնված է յեղել նյութերի շատ մեծ քանակությամբ. որինակ՝ 6-րդ տարրում պետք է անցվեր ամբողջ մեխանիկան և ամբողջ շեր-

մուրյունը, իսկ 7-րդ տարում ելեքտրականությունը, ձայնը և լույսը:

Յերբեք՝ նյութերի բաշխման և ժամանակների վորոշման վրա բավականաչափ ուշադրություն չ' դարձվել. լույսի համար տրվել եր ընդամենը 30 ժամ և ծրագրով պահանջվում եր անցնել ամբողջ լույսը. ծրագրերից համար են յեղել ամբողջ բաժիններ, որինակ՝ ելեքտրոսահիկան:

Չորրորդ՝ մեխանիկան ուսման վեցերորդ տարում անցվում եր մաթեմատիկական բավականաչափ բազիսի բացակայությամբ. Փիզիկան և քիմիան սկսվում ելին միաժամանակ, վոր տանում եր դեպի անջատվածություն ու պարալելիզմ (տեսակարար կցիոր, գագերի մասին որենքները) և դասավիճ հրում եր դեպի պարզեցման ու փուլգարացման:

Հինգերորդ՝ այդ ծրագրով արփող գիտելիքների ծավալը, անբավականաչափ և հանդիսացել նրա համար, վորպեսզի սովորողները, վորպես միջնակարգ հանրակրթական դպրոց անցածներ, կարողանային հաշվել բոլորովին պատրաստված անձինք տեխնիկումներում և ԲՈՒՀ-երում հատուկ դասընթացներ անցնելու համար:

Տեղի յեն ունեցել և սկզբունքային սխաներ ու պարզեցման-փուլգարացման մոտեցում դասընթացի առանձին բաժինների նկատմամբ:

Ահա թերությունների այն բոլորովին վոչ լրիվ ցանկը, վոր ունեցել են 1932 թվի հունվարում հրատարակած ծրագրերը:

ԱՄՖԻՀ Լուսժողկոմատի ուսումնական ծրագրերին, Համկոմկուսի (թ) կենտկոմի ոգոստոսի 25-ի վորոշման մեջ, արրաված գնահատականն ամբողջապես վերաբերվում ենաև ԱՄՖԻՀ Լուսժողկոմատի 1932 թվի հունվարին հրատարակած ծրագրերին:

Ինչպես ասվել ե վերևում, առաջարկվող այս ծրագրերը կազմված ե Համկոմկուսի (թ) կենտկոմի ոգոստոսի 25-ի վորոշման հիմունքով:

Այդ վորոշման մեջ ասված ե այն մասին, վոր ծրագրերի վերամշակումը պետք ե կատարվի այնպիսի ձևով. «Կորպեսզի անպայմանորեն ապահովի յուրաքանչյուր գիտության հիմունքների կայուն յուրացումն ու ամրապնդումը»:

Կենտկոմի վորոշման մեջ առանձին ուշադրություն ե դարձված և հատուկ ցուցմունքներ ե տրված ֆիզիկայի ծրագրի վերաբերմամբ:

1) Ուսումնական նյութի ներքին վերաբաշխման մասին յերկրորդ կոնցենտրի խմբակների համար:

2) Այդ ծրագրերի ուսումնական նյութը, բնույթն ու ծավալը սովորողների հասակային առանձնահատկություններին վակատար կերպով համապատասխանեցնելու մասին:

3) Ծրագրերի կրծատման մասին:

4) 2-րդ կոնցենտրի մաթեմատիկայի, ֆիզիկայի և քիմիայի ուսումնական ծրագրերի մեջ յեղած անջատվածության փաստերը վերացնելու մասին.

5) Ֆիզիկայի գասընթացի մեջ ստատիկայի տարրերը, ուժի հասկացողությունը, նյուտոնի որենքները մացնելու մասին:

Դրանից յենելով ծրագրերը կազմելիս ԱՄՖԻՀ Լուսժողկոմատի կողմից մանրակրկիտ ուշադրություն ե դարձվել, այդ կարևորագույն ցուցմունքները կատարելու վրա:

1. Ծրագրերը նպատակ ունի տալ այնպիսի նյութ և դասավորում, վորը թույլ տար ապահովելու սիստեմավորված գիտելիքների յուրացումը ֆիզիկայից, վոր անհրաժեշտ են «սոցիալիզմի բազմակողմանիորեն զարգացած, թեորիան պրակտիկայի հետ կապակցող և տեխնիկային տիրապետող շինարարների համար» (Համկոմկուսի (թ) կենտկոմի 1931 թ. սեպտեմբերի 5-ի վորոշումից):

Այսուեղ ամենայն խստությամբ պիտի նախագուշանալ մանկավարժների վորոշ մասի այն տրամադրություններից, վորոնք ձգտում են դասընթացի սիստեմատիկ մեկնաբանման պահանջը հասկանալ վորպես վերադարձ դեպի ֆիզիկայի դասընթացի հին «թեորետիկական» սխոլաստիկ մեկնաբանումը և կարում են նրան կենսական տեխնիկական հարցերից, սոցիալիստական շինարարության պրակտիկայից, յերկրի պաշտպանության հարցերից: Բայց դրա հետ միասին պետք ե պայքարել և այն տրամադրությունների դեմ, վորով ձգտում են լուծել ֆիզիկայի նյութը նրա բազմաթիվ հավելվածներում, խախտել նրա սիստեմատիկ անցումը և սովորողների մոտ թողնել միշտարք առանձին պատկերներ, չկապակցված ընդհանուր դեկավարող գաղափարով, այսինքն չեր լինի և փաստապես դասընթացի կայուն գիտակայից յուրացումը:

2. Ծրագրով սահմանած գիտելիքների շրջանակը բավականաչափ լայն է նրա համար վորպեսզի ապահովվի անցումը դեպի պրոֆեսիոնալիստական կրթության հաջորդ աստիճանները:

3. Իսկ նյութն ինքը դասավորված և այնպիսի, վորպեսզի Փիզիկայի դասընթացն սկսելով ուսման հինգերորդ տարում,

ավարտվի այն տասերորդ տարում, ավելի դժվար յուրացվելիք հարցերը, ինչպես որինակ՝ ելեքտրոմագնիսական ռոճումները դամելով ուսման վերջին տարիներում, յերբ սովորողների սաթեմատիկական պատրաստականության հանրակոթական մակարդակը և հենց ինքն աշակերտի հասակը թույլ կտա հիմնովին, և փոչ մակերեսորեն ծանոթանալ ֆիզիկայի այդ կառերագույն հարցերի հետ:

Ուսման հինգերորդ տարում դասընթացն սկսվում է պարզագույն չափումների ունակություններ ձեռք բերելուց և նյութի ընդհանուր հատկությունների ծանոթացումից նրա յերեք վիճակում:

Ուսման վեցերորդ տարում սկզբում արվում է մի քանի նախնական տեղեկություններ մեխանիկայից, վորոնք անհաժեշտ են 6 թղ խմբի անցնելիք նյութը, այսինքն՝ ջերմությունը, յուրացնելու համար, ապա ծրագիրն անցնում է ջերմային եներգիայի սիստեմատիկ ուսումնասիրությանը:

Յեթե հինգերորդ տարում արվում են միմիայն մի քանի ակնարկումներ մոլեկուլար-կին! այդ թեորիայից (նախալարդաստական դասընթաց), 6-րդ խմբում արդեն այդ թեորիան անցվում է հիմնովին կերպով և հետագա բաժինները մշակվում են պարտադիր կերպով այդ թեորիայի տեսանկյունով, վորով թափանցված և ծրագրի ամբողջ իմաստը:

7-րդ տարում արվում է ելեքտրական և մագնիսական յերեկույթների ուսմունքը, ըստ վորում, սկզբում արվում է հասկացողություն ելեքտրոնների թեորիայի մասին և նյութի հետագա ամբողջ անցումն ամրացվում և պարզաբանվում է այդ թեորիայի տեսակետից:

Ինկատի առնելով այն, վոր յեռափաղ հոսանքը փոչ միայն արդի արդյունաբերության հիմունքներից մեկն և հանդիսանում, այլև մեր առորյա շրջապատի մեջ և թափանցում, ծրագիրը պետք եր համապատասխան կերպով արտացոլեր յեռափաղ հոսանքի այդ լայն գործածությունը, սակայն դրա անցման դժվարությունը 7-րդ ուսումնական տարում ստիպել է այդ բաժինը փոխադրել ուսման 10-րդ տարվան:

Ուսման 8-րդ տարում անցվում է մեխանիկան, վորպես խստիվ, հետևողական դասընթաց: Սովորողների թե ընդհանուր և թե սաթեմատիկական զարգացումը թույլ կտա բավականին խորությամբ անցնել ֆիզիկայի այդ կարենագույն բաժինը:

Մնացած ամբողջ նյութը պահպան է ուսման հետեւյալ տարիների համար—իններորդ և տասերորդ. ըստ վորում ծրագի-

րը նախատեսնում է վոչ միայն դրա հնարավորությունը, այլ մինչև իսկ առաջներում անցած նյութերին վերադառնալու անհրաժեշտությունը և այդ վերադարձը հանդիսանում է վոչ այնքան անցածի կրկնություն, վորքան վոր նյութի խորացում, անցած թեորիաների տեսանկյունով այդ նյութերի կապակցում, վորպես մի ընդհանուր կազմակորված ամբողջություն:

4. Ծրագրի կառուցման ժամանակ սովորողների արտադրական և կենցաղային շրջապատից վերցրած նյութերը յելակետ չպետք է հանդիսանան, վորից արդեն հանվեն այս կամ այն որենքները, այլ ընդհակառակը այս կամ այն որենքները գործադրվում են արտադրության մեջ պատահող մի շարք յերեկույթների բացարձության համար: Այս կառուցումը լիակատար կերպով համապատասխանում է Լենինյան դրույթին, վորտեղ նշվում է այսպիսի կարգ ելեքտրականության անցման ժամանակ:

ա) Հիմնական հասկացողություններ ելեքտրականության մասին:

բ) Ելեքտրականության գործածությունը մեխանիկական, ելեքտրական արդյունաբերության մեջ և այլն (Լենինի նկատողությունները պոլիտեխնիկական կրթության մասին կրուպեկայացի թեզիների առթիվ):

5. Ծրագրը նախատեսնում է, վոր դասավանդումն ասողական չպետք ել լինի, այլ պետք ել հենվի մի ամբողջ շարք լաբարատորային աշխատանքների և մի շարք դասարանական ցուցադրումների վրա, յուրաքանչյուր բաժնի վերջում արված եւ ամեն մի կարինետի և լաբարատորիայի համար մատչելի պարզագույն աշխատանքների և ցուցադրումների որինակներ: Բոլոր այդ թե քանակական և թե վորակական աշխատանքները, պետք եր զրվեն ըստ հնարավորին ավելի լայն կերպով:

6. Ծրագրի մեջ կա ֆիզիկայի և տեխնիկայի մեջ կապ հաստատող բավականաչափ քանակի նյութեր: Դասատուն, մտցնելով այդ տեխնիկական որինակները, պետք ե վերցնի փոչ միայն վերջին որվա տեխնիկան, այլ պիտի նշին նրա պատմական զարգացումը, նրա ազդեցությունը ֆիզիկայի վրա և հակառակը: Լավ կլինի նաև մատնանշել ֆիզիկայի և տեխնիկայի այս կամ այն հարցերի ապագա զարգացման հնարավոր հեռանկարները:

7. Ռազմական ֆիզիկայի տարրերի ներմուծումը խիստ անհրաժեշտ է հանդիսանում, դրա համար դասատուն մինչև

իսկ այն գեղագում յերբ ծրագրում ուղղակի ցուցումներ չկա, պետք ե նշի այս կամ այն յերևույթի կիրառումը ուղղմական գործում: Որինակ ծրագրում հասարակ կերպով արված ե «հեռախոսը», բայց դասատուն ունենալով նշած դրութը, ինքը պիտի նշի նրա նշանակությունն ու կիրառումը յերկրի պաշտպանության հարցերում:

8. Ֆիզիկայի ամբողջ նյութն իրար հետ կապակցելու, մի ընդհանուր կազմավորված ամբողջություն դարձնելու անհրաժեշտությունը ստիպում է առանձին ուշադրություն դարձնել այնպիսի ընդհանրացնող թերիաների վրա, ինչպիսիք են մոլեկուլար-կինետիկ, ելեքտրոնների, լույսի, ելեքտրոմագնիսական թերիաները, փորոնք վորպես ցեմենտ մի ընդհանուր ամբողջության մեջ միացնում են դասընթացի առանձին յերեվություններն ու բաժինները:

9. Ֆիզիկայի ուսումնասիրության ժամանակ հարկավոր ե հիշել, փոր այդ գիտությունն առանձնապես ավելի շատ նյութ ե տալիս Մարքս-լինինյան աշխարհայեցողության դարգացման համար գեղի բնական յերևույթները դիալեքտիկական մատերիալիզմի հիմունքով:

10. Ծրագիրը կազմելիս առանձին ուշադրություն ե դարձվել առանձին դիսցիպլինաներն իրար մեջ կապակցելու վրա: Ծրագրերի առթիվ վորպես լրացում արվելու յե յերեք գլխավոր իրար հետ հարվող դիսցիպլինաների՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի և քիմիայի կապը նկարագրող որինակելի աղյուսակ:

Ծրագրի նյութի նետ կապված անհրաժեշտ ե ներկա այդ նյութի մշակման մերոդիկայի նիմնական դրույթները:

ա) Ֆիզիկայի բոլոր գրությունները և նրա որենքները պետք ե արվեն, վորպես պատմականորեն զարգացվող պրակտիկայի ընդհանրացում:

բ) Ամենուրեք անհրաժեշտ ե հայտնաբերել դիալեքտիկական որենքները, առանձնապես քանակը վորակի փոխվելու որենքը, վորի յուրացման համար շատ որինակներ կան ֆիզիկայի բոլոր բաժիններում:

գ) Ամենուրեք, վորպես բազա, անցվող նյութի հիմքում դրվում ե մոլեկուլար-կինետիկ թերիան, յեթերի տատանումները, ելեքտրոնների թերիան, վորոնք վորպես ցեմենտ են հանդիսանում դիալեքտիկական-մատերիալիստական աշխարհայացքն ամրապնդելու համար:

Մի քանի խոսք Փիզիկայի և ուրիշ գիտականաների կապի մասին.

ա. Ֆիզիկան պիտի մեկնաբանվի, վորպես արդի տեխնիկայի հիմքը.

բ. Զի կարելի դպրոցի պոլիտեխնիկացիան կտրել ֆիզիկայի դասավանդումից. պոլիտեխնիկական կրթությունը կապված է, վոչ միայն ֆիզիկայի, այլև ուրիշ գիտությունների հետ—ինչպիսին են քիմիան, մաթեմատիկան և դրանով իսկ ստեղծվում ե նոր կապ ֆիզիկայի և ուրիշ գիտությունների մեջ:

Վերջաբանում—սույն ծրագիրը կազմելու և քննության առնելու կարգի մասին:

Լուսավորումատի Ռւսումնա-Մեթոդական Սեկտորի, Մանկավարժության և Մանկաբանության Գիտա-Հետախուզական ինստիտուտի մամսակցությամբ, կազմված այս ծրագիրը, քըննության ե առնվել լուսավորումատի կողեկիցիում և վորպես նախագիծ քննարկության ե դրվել ուսուցչական լայն մասսաների մեջ Բագվում, Գյանջայում, Ղազախում և Ստեփանակերտում, վորից հետո նորից քննության ե առնվել կոլեգիայի հատուկ նիստում՝ Համկոմկուսի (բ) կենտրոնի իր ոգուտոսի 25-ի վորշման մեջ տված ցուցմունքների համապատասխան լինելու տեսանկյունով, այլև հաշվի յեն առնվել այն առաջարկությունները, վոր արվել են մասսայական ուսուցչության կողմից և մտցվել համապատասխան փոփոխություններ:

Առաջարկող ծրագիրը հաստատված ե ԱՍԽՀ ԼԺԿ-ի
Կոլեգիայի կողմից 1932 թվի դեկտեմբերի 20-ին

ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ

V—ԽՄԲԱԿ

(Տարեկան 80 ժամ)

(Ներածություն 3 ժամ)

Ընդհանուր ցուցմունք այն մասին, թե ինչ է ուսումնասիրում ֆիզիկան: Ֆիզիկայի նշանակությունը տեխնիկայի և ռազմական գործի համար:

Ֆիզիկական մարմին: Նյութ. Նյութի յերեք վիճակը:

Ընդհանուր հասկացողություն այն մասին, վոր մենք անվանում ենք կարծր մարմին, հեղուկ մարմին և գազային մարմին:

Նյութի փոփոխվելը մի վիճակից մյուս վիճակին ջերմության կամ ցրտության ազդեցության տակ:

ՑՈՒցԱՐԵՐՈՒՄՆԵՐ

- Մոմի և արձիճի ձուլումն ու պնդանալը:
- Ջրի յեռացումն ու գոլորշիացումը.
- Ջրի գոլորշիների հեղուկ վիճակի փոխվելը.
- Յոդի հալումը և գոլորշիացումը.
- Վոլտյան աղեղի միջոցով ցույց տալ եկրանի վրա յերկաթի և աղյուսի ձուլումն ու յեռացումը: Ի՞նչ տաել ե մարմինների ընդհանուր հատկություններ և մասնավոր (վոչ ընդհանուր) հատկություններ:

Մարմինների տարածականությունը
(12 ժամ)

Ի՞նչպես է չափում մարմինների տարածականությունը: Յերկարության չափեր: Յերկարություն չափելու յեղանակները (միջոցները): Քանոն: Կրոնցիրկուլ (կոր կարկին): Ներսաչափ շտանգեն կարկինի մոդելը (նոնիուսով):

Հասկացողություն շարլոնների մասին: Հասկացողություն պտուտակածների գծի և պտուտակավոր կտրտվածքի կազմվելու մասին (ատաղձագործական ձեռնամամուլի վրա):

Մանրաչափային պտուտակի մոդելի պատրաստումը ձեռնամամուլի միջոցով: Ուղղանկյան մակերեսի չափումը: Սնկանոն պտուտակների մակերեսների չափումը: Ծավանների չափեր կարծր հեղուկ և գազային մարմինների համար:

Մենզուրկա: Քառանկյուն չորսակի ծավալի հաշվումը: Ծծմբի, քարի կտորի ծավալի գորոշումը: Անոթների պարունակությունը:

ՑՈՒցԱՐԵՐՈՒՄՆԵՐ

- Քանոնով չափելու ծանոթություն:
- Ծանոթություն այն սխալների, վոր ստացվում ե պարագակի վրա:
- Ծանոթություն նոնիուսի մոդելի հետ:
- Պտուտակածն գծի կազմվելը թղթե յեռանկյունը գլանի վրա փաթաթելու միջոցով:
- Ատաղձագործական ձեռնամամուլով մանրաչափային պտուտակ պատրաստելը:
- Ծանոթություն մանրաչափային պտուտակի մոդելի ողնությամբ չափելու տեխնիկային:

ԼԱԲԱՐԱՏՈՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆԲԵՐ

- Չափում շտանգեն կարկինի ողնությամբ:
- Ուղղանկյուն թիթեղի մակերեսի չափումը:
- Անկանոն պտուտակի մակերեսի չափումը:
- Ուղղանկյուն չորսակի (կոճղի) ծավալի գորոշումը:
- Մենզուրկայի միջոցով (քարի, կտորի, ծծմբի) ծավալի գորոշումը:
- Մարմինների ծավալի գորոշումը ջրաթափ անոթի միջոցով (ուշագրություն դարձնել փոքր ճշտության վրա):
- Անոթի պարունակության գորոշումը:

ԿԵՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ (10 ժամ)

Հասկացողություն մարմինների կշռականության մասին: Ծանրության ուժը, նրա ուղղությունը՝ կապարալար հարթաչափ, նրանցից ողտվելը շինարարական և ռազմական գործում: Ծանրության չափեր: Կշռոքներ, նրանց սխատեմները: Հասկացողություն կշռոքների զգայնականության մասին (փորձերի միջոցով):

Լաբարատորային աշխատանքներ

1. Շանոթություն կշռոքների հետ:

2. Կշռելու կանոնները:

3. Կարծր և հեղուկ մարմինների կշռելը:

Հասկացողություն նյութի տեսակարար կուի մասին

Մարմինի կշռի և տեսակարար կշռի տարրերությունը: Կարծրը և հեղուկ մարմինների տեսակարար կշռի վորոշումն ամենահասարակ միջոցներով: Մարմինի կշռի, տեսակարար կշռի և մարմինի ծագալի միջն յեղած փոխարարերությունները:

Լաբարատորային աշխատանք

Վորոշել ծծմբի, քարի, նավթի, թթվուտի տեսակարար կշռու:

Ջեմության ներգործությունը մարմնի վրա
(3 ժամ)

Մարմինների ընդարձակումը ջերմությունից և սեղմվելը ցրտից: Փորձեր կարծր, հեղուկ և գազային մարմինների ընդարձակման առթիվ:

Հասկացողություն ջերմաչափի կառուցվածքի մասին: Ջերմաչափի մշտական կետերի սառւցումը: Ցելայուսի աստիճանացույցերը:

Ցուցադրումներ յեվ լաբարատորային աշխատանքներ

ա) Կարծր մարմինների ընդարձակվելը տաքանալուց և սեղմվելը սառչելուց:

բ) Հեղուկ մարմնի ընդարձակվելը տաքանալուց և սեղմվելը սառչելուց:

գ) Գազային մարմնի ընդարձակվելը, տաքանալուց և սեղմվելը սառչելուց:

դ) Ջերմաչափի կառուցվածքը (մոդել):

յե) Օ° կետի նշանակումն ինքնագործ պրիզորի ողնությամբ:

զ) Պատրաստի պրիզոր 100° ստուգելու համար:

Կարծր մարմինների հատկությունները

(5 ժամ)

Հասկացողություն կարծր մարմինների մասնիկների հարակցականության մասին:

Կարծրության աստիճանացույց: Կարծրականության աստիճանակարգով դասավորել յերկաթը, արձիճը, փայտը, ապակին, պողպատը:

Մարմինների առաձգականությունը: Առաձգական, կակուղ և բեկուն մարմիններ (որինակներ և փորձեր):

Զեափոխություն (գեֆորմացիա): Զեափոխության տեսակները՝ ընդարձակման, սեղմելու, ծոելու, վորոբելու և կտրելու ժամանակ փորձերի միջոցով: Առաձգական և մնայուն ձեվագայումներ (փորձեր):

Ցուցադրումներ յեվ լաբարատորային աշխատանքներ

ա) Կավճի, ապակու, փայտի հարակցականության աստիճանի համեմատություն (ավելի լավ և կոտրելու միջոցով):

բ) Փորձեր բարակ լարերի, թելերի հետ:

գ) Մարմինների (կավճի, փայտի, յերկաթի, ապակու, պողպատի, արձիճի) կարծրականության համեմատումը, մարմինների դասավորումը կարծրության աստիճանակարգով:

դ) Ծանոթություն առաձգական, բեկուն, փխրուն և կակուղ մարմինների հետ:

յե) Ծանոթություն ձեափոխումների տարրեր տեսակների հետ:

զ) Թիթեղի կտորի վրա ցույց տալ մնայուն և փոփոխվող (առաձգական) ձեափոխումների մեջ յեղած տարրերությունը:

ե) Նույնը յերկաթյա և պղնձյա պտուտակի վրա:

Ճնշում յեվ ճնշման ուժը (2 ժամ)

Հասկացողություն հենման կետի ճնշման մասին: Ճնշման ուժը: Ճնշումը չափելու միավորը: Ճնշման ուժը հենման ամբողջ մակերեսի վրա:

Ցուցադրումներ յեվ լաբարատորային աշխատանքներ

ա) Մարմին հենման կետի վրա ունեցած ճնշումն, աղյուսն իր լայնությամբ նեղ կողով և անկյունով ավազի վրա զնելու որինակի միջոցով:

բ) Գծադրել աղյուսակ, վորը հասկացողություն տա սղանի, տանկայի թրթուռածե ընթացքի նշանակության մասին:

Սկզբնական տեղեկությաններ նյութի մոլեկուլյար-կինետիկ
քեռիայի մասին (վորպես նախապատճառաւրյուն) (3 ժամ)

Մոլեկուլա: Ատոմ: Հասկացողություն մոլեկուլների մեծությունների մասին: Միջամասնիկային տարածությունները: Հարակցական ուժը մոլեկուլաների միջև: Հասկացողություն մոլեկուլաների շարժման մասին: Մարմիններ: Մարմնի ձևը և ծավալը:

Հեղուկների հիմնական հատկությունները (2 ժամ)

Հեղուկների փոքր սղմելիությունը: Փորձի վրա համեմատել ողի սղմելիության հետ:

Պասկալի սկզբունքը ճնշման հաղորդման մասին:

Ջրածնշական մամուլ և նրա գործածությունը. կռում, դրոշմում, յուղի սղումը: Հեղուկների ճնշումը ծանրության հետևանքով: Ճնշումը վերելից դեպի ներքև դրա որենքները, ճնշումը ներքելից դեպի վերև: Հեղուկի ճնշումը անոթի հատկի վրա կախված չե անոթի ձևից:

Ճնշումը անոթի կողային պատերի վրա: Ժայլթքող ջրի (գաղի) հոսանքի բետակցիան, ոգտագործումը տեխնիկայում:

Հեղուկի հավասարակշռության պայմանները: Հեղուկի ազատ մակերեսը: Հեղուկի մակարդակը հաղորդակից անոթներում: Տեխնիկական ոգտագործումը՝ ջրաչափ ապակի, արտեզյան ջրհոր: Զանազան հեղուկների հավասարակշռությունը յերկու հաղորդակից անոթներում:

Ջրի մեջ սուզված մարմինների կրած ճնշումը: Արքիմեդի որենքը: Մարմինների տեսակարար կշռի վորոշումը. Արքիմեդի որենքի հիման վրա: Նավերի լողալը, ընդլոյա նավերի լողալու պայմանները:

Ցուցադրումներ յեվ լաբարատորային աշխատանքներ

ա) Ջրով լցած շալի խցանին մուրճով խփելով, ցույց տալ փոքր սղմելիությունը:

բ) Միոցավոր սրվակի վրա ցույց տալ ողի մեծ սղմելիությունը:

գ) Պասկալի սկզբունքը դպրոցում յեղած վորևէ պրիբորի սղմությամբ:

դ) Հեղուկի ներքին ճնշման ցուցադրումը:

յե) Հեղուկի ներքելից դեպի վեր ճնշողականության ցու-

ցաղը ուժը (կարելի յե ցույց տալ ստվարաթղթյա հատակ ու նեցող լամպի ապակու վրա):

զ) Ցույց տալ վոր հեղուկի ճնշումը հատակին՝ կախված չե անոթի ձևից:

ե) Ցուցադրել հեղուկի ճնշումն անոթի պատերին:

ը) Հեղուկի և գաղի ժայլթքող հոսանքի բետակցիայի ցուցադրումն (ապակա ծայր ունեցող սետինե խողովակի վրա):

թ) Վրան վորոշ ծանրություն ամրացրած սրվակի ոգությամբ, ցույց տալ լողալու պայմանները:

Գագերի հիմնական հատկությունները

(20 ժամ)

Պասկալի որենքի գործադրությունը գաղերի նկատմամբ: Գաղերի կշիռը: Ողի կշիռը: Մթնոլորտ, նրա բարձրությունը: Մթնոլորտի ճնշումը Մթնոլորտային ճնշման հայտնաբերման Մթնոլորտի ճնշումը: Տորիչելիի փորձը, մթնոլորտային ճնշման չապատճությունը: Տորիչելիի փորձը, մթնոլորտային ճնշման չափումը, մնդիկա ծանրաչափ և աներոիդ: Բարձրաչափ: Արքիմեդի փորձը, մնդիկա ծանրաչափակից գաղերի նկատմամբ: Ողաչվությունը դի որենքի կիրառումը գաղերի նկատմամբ: Բաց մանումետրը: Մեթաղերի առաջականության չափումը: Բաց մանումետրը: Մատուցումը մանումետրը: Գաղերի հատկությունների վրա հիմնված գործիքների կառուցվածքը: Սիֆոն: Լիվեր, հեղացիր, պիպետագործների կառուցվածքը: Հրմուղներ, ողաճնշողական գործիքներ, պահանջիչ արգելակի:

Ցուցադրումներ յեվ լաբարատորային աշխատանքներ

ա) Ողի ճնշման վորոշումը բաց մնդիկա ողախտաչափի (մանումետրի) ողնությամբ:

բ) Տորիչելիի փորձը:

գ) Փորձ աներոիդի հետ զանգակի տակ:

դ) Աշակերտների միջոցով պատրաստել պիպետակա, սիֆոն, լիվեր, հեղուկացիր (պուլվերիզատոր):

յե) Գծագրել ջրհանների կառուցվածքների դասարանական աղյուսակներ, և յեթե հնարավոր ե պատրաստել նրանց մուկելները:

զ) Պատրաստել ողաճնշողական արգելակի գաղափարը ցուցադրող աղյուսակ:

VI-ՐԴ ԽՄԲԱԿ

(120 Ժամ)

Մի ժամի Տեղեկություններ սեխանիկայից
(15 Ժամ)

Հասկացողությունն հավասարաշատի շարժման մասին. արագություն. անցած ճանապարհ. հավասարաշատի շարժման հավասարությունը. Հանգուտի և շարժման իներցիա. Նյուտոնի առաջին օրենքը. Ուժ, նրա բաժանման միավորները (կլզր. գինա) հասկացողություն աշխատանքի մասին. աշխատանքի չափման միավորներ. կիլոզրամ մետրեր), աշխատանքի աղբյուրի ուժը. Ուժգնության միավոր (ձիու ույժ) աշխատանքի և ուժգնության հաշվումները ծանրություններ բարձրացնելու ժամանակ. Եներգիա. Եներգիայի տեսակները. Եներգիայի մի տեսակի փոխվելն ուրիշ տեսակի:

Զերմության եներգիայի գերն արդի տեխնիկայի մեջ:

Սպիտակ և բաց կապույտ ածուխի եներգիայի ոգտագործման հասկացողություն:

Յուցադրումներ յեվ լաբարատորային աշխատանքներ ՅՈՒԹԱԴՐԵԼ:

ա) Կիլոզրամմի բարձրացումը մի մետրի վրա:

բ) Շփման մեխանիկական աշխատանքի փոխանցումը Զերմայինի:

գ) Ելեքտրոներգիայի փոխանցումը Զերմայինի:

դ) Զերմային եներգիայի փոխանցումը մեխանիկականի տաքացվող սրվակում միոցը բարձրացնելու ճանապարհով:

յ) Ելեքտրոներգիայի փոխանցումը մեխանիկականի, (փոքրիկ ելեկտրոմոտորի վրա):

Զերմությունը յեվ նրա չափամը (5 Ժամ)

Ուսման V-րդ տարվա դասընթացի նյութերի կրկնություն (Զերմության ազդեցությունը մարմնի վրա): Հասկացողությունը բարձր և ցածր Զերմաստիճաններ չափելու յեղանակների մասին:

Զերմության տարածվելը յերմաղորդականությամբ
(5 Ժամ)

Հասկացողություն Զերմաղորդության մասին: Զանազան նյութերի Զերմաղորդականության համեմատումը:

Զերմության լավ և վատ հաղորդիչներ: Տեխնիկական ոգտագործումը:

Յուցադրումներ յեվ լաբարատորային աշխատանքներ

1. Փորձ ջրի վատ չերմհաղորդությունը ցուցադրելու առթիվ (բացվածքից տաքացվող պրոբիրկայի միջոցով):

2. Մետաղների տարբեր չերմհաղորդականությունը ցուցադրող փորձ:

Զերմության տարածվելը կոնվեկցիայով
(5 Ժամ)

Հասկացողություն կոնվեկցիայի մասին. կոնվեկցիան գազերի և հեղուկների մեջ: Կոնվեկցիայի ոգտագործման օրինակներ (սենյակների տաքացնելը վառարաններով, կենտրոնական ջերմաղորդիչներով, բնական ոգափոխություն): ծովային հոսանքներ:

Յուցադրումներ յեվ լաբարատորային աշխատանքներ.

ա) Կոնվեկցիայի ցուցադրումը ջրով մի կոլբայում մեջը սղոցվածք ածելով:

բ) Կոնվեկցիայի ցուցադրումը գազերի մեջ (ցուցադրել ելքանի վրա փայլուն ճառագայթի ոգնությամբ, տաք մոմի, տաքացրած մարմնի, յեթերի գոլորշիների ջերմային հոսանքները

Ճառագայթացնում յեվ ճառագայթականում (5 Ժամ)

Հասկացողություն ճառագայթացման և ճառագայթականման մասին:

Այն գործոնները, վորոնք աղղում են ճառագայթացման և ճառագայթականման տարբեր աստիճանների վրա:

Որինակներ, վորտեղ նկատի պիտի առնել Զերմության հաղորդման բոլոր յեղանակներն ել (Զերմության կորստի գորոշումը շոգեկաթսայում, պատերի տաքացրումը, սառնարան, բնակարանների տաքացնելը): Ավտոմոբիլի Զերմասիֆոնը:

Զերմության վոչ արտադրողական կորստի բնույթագրությունը վառելիքն այրելիս (կորուստներ վոչ լրիվ այրվելու հետևանքով, կորուստներ դուրս յեկող գազերի հետ, կորուստներ շրջապատի տարածությունում ճառագայթացման հետեւ վառքով): Վառելիքի նպատակահարմար այրման պայքարը մեր արդյունաբերության մեջ:

Ցուցադրումներ և լաբարատորային աշխատանքներ:

1. Ճառագայթացման փորձեր (ավելի լավ և յերկու բանկայի վրա մեկը մաքուր մյուսը մրոտած):



2. Սառցարանի տարբեր նյութերից շինած պատերի, տերմասի իզոտերմիկ վագոն գծագրությունների (պատի) պատրաստում:

Զերմային Եներգիայի չափումը (15 ժամ)

Հասկացողություն զերմության հանակության մասին:

Զերմության քանակի չափման միավորներ՝ գրամմ կալորիա, կիլոգրամմ կալորիա (փոքր և մեծ կալորիա): Զրի տաքացման համար անհրաժեշտ զերմաքանակի հաշվումը:

Զերմություն

Նյութի տեսակարար զերմունակությունը: Կալորիմետրի չառուցվածքը և նրանից ոգտվելը նյութի տեսակարար զերմունակությունը փորոշելու համար: Մարմինները տաքացնելու համար անհրաժեշտ զերմաքանակի փորոշումը:

Խարսուրդի միջին զերմաստիճանը: Զերմային բալանսի հավասարությունը (թվային):

Գազերի զերմունակությունը մշտական ձնշման ու մշտական ծավալի տակ:

Ցուցադրումներ յեվ լաբարատորային աշխատանիւններ

1. Տարբեր զերմունակություն ունեցող նյութերի ցուցադրումը համեմատելով՝ այն ժամանակամիջոցները, վոր անհրաժեշտ և միենույն քանակի ջուր և սնդիկ տաքացնելու համար, յերկաթը ջրում տաքացնելու համար և այլն մինչ միենույն զերմաստիճանը:

2. Մարմինների զերմունակության փորոշումը կալորի մետրի ոգնությամբ:

3. Բարձր զերմաստիճանների փորոշումը կալորիմետրի ոգնությամբ:

Վառելիքի կալորիականությունը

Վառելիքի տարբեր տեսակների կալորիականությունը (զերմատար ընդունակությունը):

Հասկացողություն պայմանական վառելիքի մասին: Տաքացնող պրիզորների (սարժոյի) զերմային բալանսը (զերմային բալանսից հանել ոգտակար գործողության գործակցի հասկացողությունը): Տաքացնող պրիզորների ոգտակար գործողության գործակցի վարոշումը (փորձնական):

Հասկացողություն սննդի կալորիականության մասին:

Ցուցադրումներ յեվ լաբարատորային աշխատանիւններ ա) Վառելիքի տարբեր տեսակների կալորիականության չափը ցուցադրության դասարանական դիագրամների գծագրության:

բ) Սննդի տարբեր տեսակների կալորիականությունը ցուցադրության դիագրամների գծագրությամբ:

շ) 1 կլգ. ջուրը 1°-ի տաքացնելը:

դ) Սպիրտի չերմատվության (կալորիակարության) վորոշումը (մոտավոր կերպով):

ե) Պրիմուսի կամ սպիրտի լամպայի ոգտակար գործնեցության գործակցի վորոշումը:

Մարմինների ընդարձակումը տաքանակուց 10 ժամ

Մարմինների ընդարձակվելը տաքացնելուց զերմության մուլեկուլյար շարժողության թիորիայի տեսակետից: Կարծր մարմինների ընդարձակման գործակիցը: Յերկարացման չափի հաշվումը: Տեխնիկական ոգտագործումը՝ ուելսերի միջանցը, շոգեհաղորդիչների կոմպենսատորները: Հեղուկ մարմինների ընդարձակումը և ընդարձակման գործակիցը, ջրի զերմընդարձակման առանձնահատկություններն, այդ գործոնի նշանակությունը բնության կյանքում:

Գաղերի զերմային ընդարձակումը Գելլյուսսակի որենքը:

Ցուցադրումներ յեվ լաբարատորային աշխատանիւններ

Ա) Գելլյուսսակի որենքի ցուցադրումը:

Բ) Պատրաստել աղյուսակներ, վորոնք ցուցադրեն տաքացնելուց ընդարձակելու յերեսութիւնների տեխնիկական ոգտագործումը:

Գ) Կարծր մարմինի գծային ընդարձակման գործակցի վորոշումը:

Դ) Հեղուկ մարմինի ընդարձակման գործակցի բորոշումը:

Զերմության մոլեկուլյար-կինետիկ բեռիան
(15 ժամ)

Մոլեկուլյար ուժեր: Մակերեսվույթային ձգվողականության: Մազականության յերեսութիւններ: Մոլեկուլաների շարժումը: Բրոունովյան շարժում: Դիֆֆուզիան հեղուկներում, գազերի և կարծր մարմինների մեջ: Գաղերի ճնշումը, վորպես մոլեկուլաների հարվածների արգունք: Բոլլ-Մարիուտակի որենքը: Մոլեկուլաների շարժման արագության ավելացումը զերմաստիճանը բարձրացնելուց: Գաղերի ճնշման մեծության կախությունը:

զածությունը ջերմաստիճանից, Հասկացողության բացարձակ գերոյի և բացարձակ ջերմաստիճանի մասին:

Յուցադրումներ

ՅՈՒՅԱԴՐԵԼ

ա) Զրի և պղնձարջասպի լուծույթի ազատ զիֆֆուզիանը Յուցադրել դասարանում բենզինի (կամ յեթերի) գոլորշների ազատ դիֆուզիան:

բ) Յույց տակ հեղուկների վոչ ազատ զիֆֆուզիան թաղանթէ միջոցով:

շ) Յուցադրել գազերի վոչ ազատ դիֆֆուզիան ծակուկենավոր միջնապատի միջոցով (ծակուկեն գլան):

ե) Յուցադրել մանրադիտակի տակ Բըռունովյան շարժումը (յանկալի յե):

Նյութի ագրեգատ դրույթան փոփոխությունը
(25 ձամ)

(Մոլեկուլար կինետիկ թեորիայի հիմունքով)

Մարմինների հալելը: Բյուրեղածել կառուցվածք ունեցող մարմինների ջերմաստիճանի մշտականությունը հալելու և կարծրանալու ժամանակ. վոչ բյուրեղածել կառուցվածք ունեցող մարմինների շեղումներն այդ մշտականությունից: Զուրկածքների ձուրման ջերմաստիճանը: Դյուրահալ ձուրվածքներ և նրանց գործադրությունը տեխնիկալալում:

Ջերմության կլանումը հալելու ժամանակ: Հալման տեսակարար (գաղտնի) ջերմությունը: Սառույցի հալեցման ջերմությունը և նրա փորոշումը: Բնական մի շարք յերկույթների բացատրություն: Մավալի փոփոխումը հալելու ժամանակ: Հալումը ճնշման ազդեցության տակ: Սառույցի հալումը ճնշման տակ: Լուծվելու ջերմությունը: Լուծույթների սառչելը: Գոլորշի կազմելն ու խտացումը (մոլեկուլար շարժողականության թեորիայի տեսակետով):

Գոլորշիացում և նրա որենքները: Յեռացում, դրա եյությունը և տարբերությունը գոլորշիացումից: Զրի և այլ հեղուկների յեռացման կետը նորմալ ճնշման դեպքում: Պատերի դրության և ողի բշտիկների ներկայության ազդեցությունը յեռացման վրա:

Զրային լուծույթների յեռացման կետը: Բարդ հեղուկների յեռացումն ու գոլորշիացումը: Ֆրակցիոն թորում: Յեռացումը ճնշման ավելացման ժամանակ: Զրի յեռացումը կաթսաներում:

Նոգիացման չերմություն

Գոլորշիացող մարմնի ջերմաստիճանի անկումը: Կարբյուրադությունը հագեցնող գոլորշի: Տարածությունը չհագեցնող գոլորշի (խիտ տաքացրած գոլորշի): Գերաքացրած գոլորշու գործածությունը տեխնիկայում: Դալտոնի որենքը գազերի և հագեցնող գոլորշիների համար: Հասկացողություն գազի մասին, վորպես գոլորշու: Գազերի խտացումը:

Հասկացողություն կրիտիկական ջերմաստիճանի մասին: Ողի խոնավությունը: Յողի կետը: Բացարձակ և հարաբերական խոնավություն: Խոնավույցեր և խոնավաչափեր:

Յուցադրումներ

ՅՈՒՅԱԴՐԵԼ

ա) Ծավալի փոփոխումը հալելու և կարծրանալու ժամանակ, պինդ կտորները հալած շիկացած մարմնի մեջ զցելու միջոցով:

բ) Զանազան հեղուկների գոլորշիացումը. դիտել ծծողականի վրա յեղած կաթիկների չորացումը:

շ) Միենույն քանակի հեղուկի գոլորշիացումը ափսեյից և պրոբիրկայից (մակերեսի ազդեցությունը):

դ) Բենզինի, յեթերի սառչելը գոլորշիացման ժամանակ: ե) Յեռումն ավելացրած ճնշման տակ: զ) Յեռումն նվազեցրած ճնշման տակ:

յե) Տարածությունը հագեցնող գոլորշիներ (ջրային գոլորշին կամ յեթերի գոլորշին ծանրաչափական խողովակում): ը) Տարածությունը չհագեցնող գոլորշիներ (ծանրաչափական խողովակում):

թ) Յող կետի փորոշումը ջրով լի բաժակի մեջ ձյուն ածելու ճանապարհով:

Լարարատորային աշխատանքներ

1. Նավթալինի հալումը և նրա կարծրանալը (ջերմաստիճանի մշտականությունը և հալման կորի կառուցումը):
2. Կորի կառուցում մոմը հալելու համար:
3. Սառույցի (ձյան) հալումը, ջերմաստիճանի մշտականությունը:

4. Սառույցի հալման ջերմության փորոշումը:
5. Կիտել ջրի յեռացումը կոլբայում:
6. Զրային լծույթների յեռացման կետը:

- Ֆըրակցիոն թորում (ջուրը սպիրտի հետ):
- Զբի շոգիացման ջերմության վորոշումը յեռման ժամանակ:

9. Զբախողովակյա, կրակախողովակներ և լանկաշիրյան կաթսաների գծագրությունների պատրաստումը:

10. Ողի խոնավության հաշվումը:

11. Խոնավացույցի կառուցում (որինակ ֆաներկայի կտորից):

Ջերմային եներգիա յեվ նրա ոգտագործումը
(20 ժամ)

Մեխանիկական եներգիայի փոխանցումը ջերմայինի և ընդհակառակը: Զերմության մեխանիկական եկվիվալենտն ըստ ջոռվի: Մխոցավոր մեքենայի ընդհանուր կառուցվածքը: Հասկացողություն շոգետուրբինայի կառուցվածքի մասին: Համառոտ պատմական տեղեկություններ շոգեմեքենայի զարգացման պատմությունից (տալ տեղեկություններ շոգեմեքենայի տեխնիկական եփոյուցիայի մասին, մինչդասակարգային պայքարի հետ կապված): Ընդհանուր հասկացողություն ներքին այրման շարժիչի կառուցվածքի մասին. Նրա գործադրությունը տրակտորի, ավտոմոբիլի և սավառնակի համար: Դիզել: Նրա գործածությունն արդյունաբերության և նավագնացության մեջ: Զերմային շարժիչների ոգտակար գործնեյության գործակիցը: $R = \frac{T_1 - T_2}{t}$

Շարժիչների տնտեսական ոգտավետության համեմատությունը (շոգեմեքենայի, շոգետուրբինայի և ներքին այրման շարժիչի):

Վառելիքի քանակի հաշվումը ձիառուժով մի ժամում տարբեր ջերմային շարժիչների համար:

Լաբարատորային աշխատանքներ յեվ առաջադրություններ սան համար

1. Զերմության մեխանիկական համարժեքի վորոշումը (ավելի լավ ե խողովակի մեջ զնդիկներ ածելու միջոցով):

2. Շոգեմեքենայի մոդելի կառուցվածքը:

3. Շոգեմեքենայի գծագրի պատրաստումը:

4. Շոգետուրբինայի մոդելի պատրաստում պողպատյա ծայրերից:

5. Շոգետուրբինայի գծագրը:

6. Ցերկտակտ շարժիչի տափակ մոդելի կառուցվածքը:

- Քառատակակտ շարժիչի գծագրումը բոլոր 4 աակտերով:
- Քառատակակտ դիզելի գծագրումը բոլոր չորս տակտերով:
- Շոգեկաթմայի ջերմային բալանսի գրաֆիկան:
- Շոգեմեքենայի, դիզելի շարժիչի ջերմային բալանսի գծագրումը:

VII ԽՄԲԱԿ

(առեկան 120 ժամ)

Ելեկտրականություն

Ներածություն (20 ժամ)

Համառոտ տեղեկություններ ելեկտրականության ուսումնական գարգացման պատմությունից:

Ելեկտրոններգիայի նշանակությունը ժողովրդական արնատեսության մեջ և ուղմական գործում: Սկզբնական տեղեկություններ ելեկտրականության մասին: Ելեկտրական հաղորդիչներ և վոչ հաղորդիչներ (փոլյասորներ) ելեկտրականացում շիման միջոցով: Լիցքերի 2 տեսակը, վեցքի չափումը: Լիցքերի փոխադարձ ազգեցությունը կուլոնի որենքը:

Համառոտ տեղեկությունն ելեկտրոնների թերթիայի մասին (ելեկտրոններ, պրոտոններ), բացատրել գրա միջոցով հաղորդականության ելեկտրիզացիան, ելեկտրականության բաշխումը հաղորդիչների մակերեսների վրա: Ելեկտրական դաշտ: Ուժագծեր: Սուր ծայրի գործնեյությունը: Ելեկտրոստատիկ ինդուկցիա: Ելեկտրական յերևույթները մթնոլորտում: Անալոգաշանթարգել: Ընդհանուր հասկացողություն պոտենցիալի մասին: Հասկացողություն ելեկտրականության և կոնդենսացիայի մասին: Կոնդենսատոր, նրա տարրողականությունը: Կոնդենսատորի տարրողականության չափը, չափման միավորները:

Ցուցադրումներ յեվ լաբարատորային աշխատանքներ ՅՈՒՅՈՐԻՐԵԼ

ա) Ելեկտրականացում շփելով կնքամումը (սուրգուչ) և յեղակատաչուկը (երոնիտ), ծծումբը և վեցքերի փոխազդեցությունը:

բ) Մարմինների հաղորդականությունը (ելեկտրոսկոպից միցքերը վանելով):

շ) Ելեկտրոստատիկ ինդուկցիա (ելեկտրոսկոպի վրա):

դ) Ելեկտրականության բաշխումը հաղորդչի մակերեսությունը վրա:

յե) Սուր ծայրի գործնեյությունը:

զ) Փորձեր ելեքտրոնավաքի (կոնդենսատոր) վրա (ամենից լավ և կոլբայի տիպի ելեքտրոնկոպի վրա):
Ելեքտրոնավաքի պարունակությունը, պարունակության որենքները:

Ելեկտրական հոսանքը վորպես ելեկտրոնների շարժում (15 ժամ)

Վոլտի ելեմենտը: Նրա գյուտի պատմությունը: Շղթա և հոսանքի ուղղությունը: Քիմիական եներգիայի փոխանցումն ելեքտրականի: Հասկացողություն բեվեռացման մասին: Հակառեկեռացման ելեմենտներ, Գրեննեյի, Դանիելի, Լենկաշեյի:

Ցուցմունք՝ ելեմենտներից բացի այլ յեղանակներով հոսանք ստանալու մասին (դինամոմեքենա, ջերմելեքտրականություն: Ելեքտրական հոսանքի տարրեր արտահայտումը: Հազորդիչների տաքացնելը. մագնիսական և քիմիական յերևույթներ: Հասկացողություն հոսանքի ուժի մասին և նրա չափելու միավորը ամպեր):

Ցուցադրումներ

Ցուցադրել՝ ա) Վոլտի և ուրիշների ելեմենտների կառուցվածքը (լավի Գորյաչկինի ելեմենտի վրա):

բ) Ազարեկեռացումը լեկանշեյի ելեմենտի վրա, ազարեկեռացման պրիբորի միջոցով և առանց նրան:

գ) Հոսանքի ջերմային գործնեյությունները (լարերի տաքանալը, լամպչկանների ճառագայթումը):

դ) Հոսանքի քիմիական գործնեյությունները:

յե) Հոսանքի մագնիսական գործնեյությունները (ելեքտրոմագնիսի վրա):

Ելեկտրական հոսանքի ուենիները (15 ժամ)

Հասկացողություն հաղորդիչների դիմագրության մասին: Դիմագրության միավոր (Ոմ): Տեսակարար դիմագրություն: Հաղորդիչների դիմագրության հաշվումը: Հասկացողություն հոսանքի լարվածության մասին: Ելեմենտների ելեքտրուշարժութը: Փորձնական համեմատում զանազան ելեմենտների ելեքտրոշարժութը ուժերի: Վոլտ:

Ելեքտրական շղթա: Անցնող հոսանքի կախումը լարվածությունից և դիմագրությունից: Ոմի որենքը:

Ընդիմադիր ապարատների բեռստատների կառուցվածքը և դրանց գործնեյությունը: Կիրառությունները, դիմագրությունների միացումը: Հոսանքի ճյուղավորումը: Կիրհովի կանոնները: Ջուղավորման ընդդիմագրությունը: Հաղորդակա-

նություն: Ամպերմետրի և վոլտմետրի շղթայի մեջ առնելը: Ելեմենտների մարտկոցը տարրերի միացման յեղանակները: Հոսանքի ուժը միացությունների ժամանակ: Տարրերի ամենասուտավետ միացումը:

Ցուցադրումներ

ա) Հաղորդիչների ընդդիմագրության որենքները (յերաշխավորվում և փորձ տաշտակի վրա):

բ) Հաղորդիչների ընդդիմագրության չափումը:

գ) Ոմի որենքը (զուգահեռ և հետեւղական կերպով լամպչկանները ներփակելու փորձի միջոցով):

Լարաւառային աշխատանքներ

1. Շղթաների կազմում և հոսանքի ուժի չափումը:

2. Ջերմային ամպերմետրի կառուցյում:

3. Շունտովյան ամպերմետրի կառուցյածք:

4. Յերկաթե լարից ընստափուի կառուցյում:

5. Ուժուոնի կամքջի հավաքումը և աշխատանք նրա հետո Հոսանքի աշխատանքը (հոսանքի ջերմային գործնեյությունը) (15 ժամ)

Հոսանքի աշխատանքը: Զոուլ: Հոսանքի ուժգնությունը: Վատու: Կիլովատու: Կիլովատու ժամ: Հոսանքի մեխանիկական գործակիցը:

Հաղորդիչների տաքացումը (բացարությունը ելեքտրոնների թեսրիայի տեսակետից): Զոուլինցի որենքը: Շիկացման լամպաներ: Դրանց տեսակները: Եներգիայի ծախսումը և այրման արժեքի հաշվումն ամորափացիայի ներառությամբ: Տաքացման դործիքներ: Եներգիայի ծախսումը և դրա արժեքի հաշվումը: Նախապաշտպանման գործիքներ: Վոլտյան աղեղ, նրա հատկությունները և տեխնիկական գործազրությունը: Ջերմատարներ և նրանց գործածությունը:

Ցուցադրումներ

ա) Ծանոթություն նախապաշտպանող պրիբորների հետ:

բ) Ելեքտրոնկարթուկի, ելեքտրովառարանի գասարանական աղյուսակի պատրաստում:

գ) Վոլտյան աղեղի հատկությունների (շերմային և լուսատու) ցուցադրումն եկանի վրա:

դ) Վոլտյան աղեղը տարրեր մարմինների մեջ (եկրանի վրա):

Լարաւառային աշխատանքներ

1. Վերաբրազել Զոուլ-Լենցի փորձը:

2. Պարզագույն ջերմատարի կառուցումը (յերկաթից և պղնձից): Մարտկոցի կառուցումը:

3. Բարձր ջերմաստիճաններ և ջերմաստիճանի փոքրիկ բարձրացումը չափելու համար ջերմատարի գործադրության աղյուսակի պատրաստում:

4. Պատրաստել վորտյան աղեղով յեփելու ցուցադրական աղյուսակ:

5. Վոլույան աղեղի միջոցով բորակածին ստանալու աղյուսակի պատրաստում:

Հոսանքի իմաստական գործողությունները (15 ժամ)

Հոսանքը հեղուկների մեջ. ա) Մետաղային հեղուկներ, բ) Ելեքտրոլիտներ, գ) Մեկուսացնող հեղուկներ:

Ելեքտրոլիտիկ գիսացիացիա: Ելեքտրոլիդ: Կրկնակի ըեակցիաներն ելեքտրոլիդի ժամանակ: Ելեքտրոլիդի որինակներ՝ (թթվեցրած ջուր, աղաթթու, պղնձարջասալ):

Ելեքտրոքիմիական համարժեքներ, ֆարագեյի որենքները: Ելեքտրոնի լիցքը: Տարրերի բեկեռացման բացատրությունը: Ելեքտրոլիդի գործադրությունը ելեքտրոքիմիայում և արդյունաբերության մեջ (պղնձի զտումն, ալյումինի ստացումը, մետաղների ծածկելը, արծիճային և ալկալային ակումուլատորների կազմությունը, նրանց համեմատումը):

Ցուցադրումներ

Ցուցադրել.

ա) Ելեքտրոլիդի զանազան դեպքեր:

բ) Պղնձի զոդումը:

Լարարատորային աշխատանքներ

1. Պարզագույն ակումուլատորի հավաքումը, նրա լիցքն պարպումը, ձևավորումը:

2. Մետաղյա առարկան ծածկել պղնձով (յեթե հսարակոր և նիկելով ծածկել):

3. Ալյումին ստանալու աղյուսակի պատրաստում:

Մագնիսական յեկ ելեկտրոմագնիսական յերյեվույթներ (10 ժ.)

Բնական և արհեստական մագնիսներու Մագնիսների բևեռները, նրանց հակազդեցությունը, Մոլեկուլային մագնիսների հիպոթեզան (վիրերի): Մագնիսական դաշտ: Մագնիսական ուժագծեր: Մագնիսական ինդուկցիա: Մագնիսական սպեկտրներ: Մագնիսական անցանելիություն: Մագնիսական ընդդիմագրություն: Հասկացողություն դիամագնիսների մասին: Յերկային մագնիսականություն:

Երշդետի փորձը: Ամպերի կանոնը (աջ ձեռքի կանոնը): Գալվանասոկոպ և գալվանոմետր: Մագնիսական դաշտը հոսանքի շուրջը: Ելեքտրոմագնիսներ: Ելեքտրոմագնիսական հեռագիր, Ելեքտրական զանգ: Ելեքտրոմագնիսական ծորակներ: Մագնիսականության ամպերյան թեորիան: Հոսանքի հակագեցությունը: Հաղորդիչի շարժումը հոսանքի հետ մագնիսական դաշտում: Զախ ձեռքի կանոնը: Զափելու պրիբորներ շարժական շրջանակներով:

Ցուցադրումներ

ա) Մագնիսների բեկեռների հակագեցությունները:

բ) Մագնիսական ինդուկցիա:

գ) Մագնիսի մոդելի կառուցում, սրվակում յերկաթյալոցվածքով (Վերերի տեսությունը):

Լարարատորային աշխատանքներ

1. Մագնիսական սպեկտրոների ստացումն ու արձանագըրությունը.

2. Երնշդետի փորձի վերաբարձրումը.

3. Պարզագույն գալվանասոկոպի կառուցումը.

4. Առանցքային ելեքտրոմագնիսի կառուցումը.

5. Ծանօթություն ելեքտրոզանգի կառուցվածքի հետ.

6. Շարժական շրջանակավոր պրիբորների կառուցումը.

Ելեկտրոմագնիսական ինդուկցիա (30 ժամ)

Ելեքտրոմագնիսական ինդուկցիա: Նրա գյուտը ֆարագեյի կողմից: Հոսանքի ինդուկցիան հոսանքով: Հոսանքի ինդուկցիան մագնիսով: Ինքնախնդուկցիա: Հասկացողություն մագնիսական դաշտում շրջանակի պտաման մասին: Փոփոխական նիսական դաշտում և այդ գեղագում: Փոփոխական հոսանքությունը, վոր ստացվում և այդ գեղագում: Փոփոխական հոսանքի հաճախակելիքի սինուսուֆուրը: Շրջան: Փոփոխական հոսանքի գեներատորի հասկացողությունը: Փոփոխական հոսանքի գեներատոր: Դինամո-մեքենաները: Դարիսխ կոլեկտոր: Դինամո-մեքենաները: Դարիսխի: Կոլեկտոր: Դինամո-մեքենաների պտամելիությունը:

Մշտական հոսանքի փոփոխակերպումը. (տրանսֆորմիրովահայք) Ռումկորֆի կոճի ոգնությամբ: Փոփոխական հոսանքի գործակերպումը: Փոխակերպիչի կառուցվածքը. նրա գործադրությունը: Ուժմուրմերը: Հասկացողություն հոսախոսի և միկրոփոնի մասին:

Յուցադրումներ

ա) **Փորձ դինամոյի և նրա պլաման հետ:**

Լաբարատորային աշխատանքներ

1. Ելեքտրոմագնիսական ինդուկցիա մագնիսով, հոսանքով:
2. Ծանոթություն ուժեղացնող և նվազեցնող տրանսֆորմատորների հետ:
3. Շրջանակի պտտումը մագնիսական դաշտում (ավելի լավ ե մագնիսական ինդուկտորի վրա):
4. Բաղիո-ընդունարանների հավաքումը և նրանց կանոնավորումը:

VIII ԽՄԲԱԿ

(Տարեկան 120 ժամ)

ՄԵԽԱՆԻԿԱ

Ներածություն (2 ժամ)

Շարժման ամենապարզ ձեր—մեխանիկական տեղափոխություն: Մեխանիկայի առարկան, վորպես մի գիտություն, վոր ուսումնասիրում ե մեխանիկական տեղափոխությունների որենքները: Մեխանիկայի զարգացման պատմական ընթացքն արտադրողական ուժերի զարգացման կապակցությամբ: Շարժումների գասավորումն ու բնույթագրումը՝ ուղղագիծ, կոր, առաջացող, պտտածկ և ճոճվող շարժումներ (կոնկրետ որինակների վրա): Հասկացողություն հարաբերական շարժման մասին: Հանդիսատ վիճակի հարաբերականությունը:

Հավապարաչափ շարժում (3 ժամ)

Հասկացողություն հավասարաչափ շարժման արագության և նրա չափելու մասին: Հավասարաչափ շարժման հավասարությունը, ճանապարհի կախման գրաֆիկան ժամանակից:

Նյուտոնի առաջին օրենքը (իներցիայի օրենքը): Բերելայնական որինակներ, վորոնց միջոցով ցուցադրվի իներցիայի նշանակությունը տրանսպորտում և արտադրությունում. ակընթարթային կանգնեցման անհնարինությունը:

Անհավասարաչափ շարժում (15 ժամ)

Հասկացողություն անհավասարաչափ շարժման արագության մասին: Արագացում: Անհավասարաչափ փոփոխական շարժում: Անհավասարաչափ շարժման արագության գրաֆիկը և հավասարության արտածությունը: Մարմինների ազատ անկումը: Գալիքյի փորձերը: Շարժումների զումարը: Վերեկց ներքն, ներքից վերև, հորիզոնական և անկյան տակ դեպի հորիզոնը

շպրտած մարմնի շարժումը: Ուռմբերի նետումը սավառնակ-ներից:

Յուցադրումներ

ՅՈՒՅՑԱԴՐԵԼ

ա) Հավասարաչափ արագացող շարժում Դուֆֆի ակոսի (Ժելոբ) ոգնությամբ:
բ) Մարմինների ազատ անկումը Գանդիի (Խաչինի) թոկի ոգնությամբ:
գ) Անկման արագության անկախությունը մարմնի մաս-այից.

դ) Ողի գիմադրության ազդեցությունը.

ե) Ժայթքող ջրի հոսանքի կորածե տեսքը:

Ուժի ներգործությունը մարմնի վրա (15 ժամ)

Բնույթագծությունը: Ուժի մեծությունը կախված էրեն հաղորդած արագությունից: Հասկացողությունն յուտանի յերկ-ը որդ որենքի մասին: Ուժ չափելու միավորներ՝ կիլոգրամմ, րին որենքի որինքը: Յերրորդ որենքը բույցադ-դինա: Նյուտոնի յերրորդ որենքը: Յերրորդ որենքը բույցադ-դինա: Նյուտոնի յերրորդ որենքը: Յերրորդ որենքը բույցադ-դինա: Դայթքող հոսանքի բեակցիան, բակետ, հրա-ձգություն, աքացելը:

Ուսվող շարժում (10 ժամ)

Հավասարաչափ շրջանաձև շարժում: Դրա գծային և ան-կյունային արագությունը: Իներցիայի արտահայտումը շրջա-գրձների և պտտելու ժամանակ: Կենտրոնախույյս և կենտրո-նաձիգ ուժ: Կենտրոնախույյս ուժի մաթեմատիկական արտա-հայտումը և դրա հետախուզումը: Որինակներ կենտրոնախույյս մեխանիզմներից: Կենտրոնախույյս կանոնավորիչ, կենտրոնա-խույյս ջրմուղ, զատիչ գործիք (ցենտրոֆուգա) չորացնելու պապարատ (սուշիկա): Արտաքին ուղի բարձրացումը շրջա-գրձներին:

Յուցադրումներ

ա) Գծային և անկյունային արագության չափումը, կենտ-րոնախույյս մեքենայի վրա.

բ) Նույնի վրա ուսումնասիրել կենտրոնախույյս ուժը:

գ) Կենտրոնախույյս ուժի զանազան հավելվածների գծագ-րերի պատրաստում,

Առաջիկա (20 ժամ)

Ուժերի չափումը: Դինամոմետրեր: Ուղիղի վրայով գործող ուժերի գումարումը: Հավասարազոր և հավասարակշռող ուժեր:

Մի կետի վրա հատվող յերկու ուժերի համազորը: Նրա գըտնելը յերկրաչափորեն և անալիտիկ կերպով: Ուժի տեղափոխություն էր ուղղությամբ: Մի հարթության վրա ընկած և տարբեր կետերի հատվող ուժերի գումարումը: Մի քանի ուժերի համազորը: Թուի բազմանկյունի: Ուժի վերածումը յերկուսի ըստ տված ուղղությունների:

Զուգահեռ ուժեր: Դրանց համազորը և հավասարակշռողը: Ուժի վերածումը յերկու զուգահեռ ուժերի: Մյունի ճնշումը հենման կետի վրա: Մի քանի զուգահեռ ուժերի գումարումը:

Յուցադրումներ

- ա) Ուժերի զուգահեռակողմի որենքը ցուցադրող փորձեր:
- բ) Ուժն ըստ տված ուղղությունների յերկուսի վերածելու փորձեր (Կոնսոլի դեպքը):
- գ) Յերկու զուգահեռ ուժերի գումարումը (զանազան դեպքը):

Մարմինների ծանրության կենտրոնը (5 ժամ)

Զուգահեռ ուժերի կենտրոնը: Մարմինների ծանրության կենտրոնը, Վերջինի գտնելը պարզագույն դեպքերում: Մարմինների ծանրության կենտրոնի գտնումը կտիելու յեղանակով: Մարմինների հավասարակշռությունը: Հավասարակշռության դեպքերը: Հավասարակշռության կազմ մարմնի ծանրության կենտրոնի հնարավոր տեղափոխումների հետ:

Յուցադրումներ

- ա) Ուղիղ յերկրաչափական ձև ունեցող մարմինների ծանրության կենտրոնի գտնելը:
- բ) Անկանոն (վորե ե) ձև ունեցող մարմնի ծանրության կենտրոնի գտնելը:
- գ) Հավասարակշռության յերեք տեսակները:

Ուժի մոմենտը (8 ժամ)

Ուժի մոմենտը: Մարմինը պատող ուժի հավասարակշռությունը: Մոմենտների հավասարությունը: Ուժերի մոմենտների վերաբերումը լծակներով խոդիրներ լուծելու համար: մարմինների կայունությունը: Մարմնի կայունության մոմենտը: Զույգ ուժեր: Զույգի մոմենտը:

Յուցադրումներ

- ա) Ուղիղ և կոր լծակների հավասարակշռությունը:
- բ) Մարմինների կայունությունը տարբեր դրությունների ժամանակ:

Շարժման ընդդիմադրություններ (12 ժամ)

Առաջին տեսակի շփում: Առաջին տեսակի շփման որենքները: Յերկրորդ տեսակի շփում (Ճոճվելիս): Ճոճվելու շփման որենքները: Գնդաձև առանցքալարեր: Շփման ուժի նշանակությունը: Քննել այն դեպքերը, յերբ շփումը մնասակար և ոգտագետ և հանդիսանում:

Յուցադրումներ

Մորենի (Կուլոնի) ինքնագործ մեքենայի վրա ուսումնամիրել:

- ա) Սահելու որենքները:
- բ) Շփման որենքները ճոճելիս:
- գ) Սովորական և գնդաձև առանցքալարերի շփման ուժի քանակության համեմատումը:

Մեխանիկական աշխատանք (10 ժամ)

Հասկացողություն աշխատանքի մասին: Աշխատանքի միավոր: Շարժման ուղղությունը չզուգացգող ուժի աշխատանքը: Աշխատանքի գրաֆիկ գծագրությունը: Մորենի գինամոմետը (ինքնագիր): Շոգեմեքենայի (կամ այրման շարժիչ) դիագրամման: Դիագրամմայի հաշվումը: Լրիվ և ոգտակար աշխատանք: Արգելակ: Ուժգնություն: Ուժգնության միավոր (կիլոգրամմետր վարկիանում): Զիսւ ուժ: Մեխանիզմների ոգտակար գործնեյության գործակցի հասկացողություն:

Կենետիկ եներգիա (կենդանի ուժ) (5 ժամ)

Պոտենցիալ և կինետիկ եներգիա: Կենդանի ուժերի հավասարությունը: Եներգիայի կատարումը: Թափանիմներ: Մի եներգիայի փոխանցումը մյուսի: Եներգիայի պահպանման որենքը: Վագոնների արգելակման յերեսյթների քննություն:

Յուցադրումներ

Ցուցադրել կինետիկ եներգիայի փոխանցումը պոտենցիալ և ընդհակառակը Մակսվելի գոճանակի ոգնությամբ:

Ընդհանուր հասկացողություն մեխանիզմների մասին (25 ժամ)

I և II տեսակի լծակների սիստեմը: Հավասարակշռության պայմաններն ուժերի մոմենտներից և աշխատանքների հավասարությունից: Մեխանիկայի վակի կանոնը: Լծակների մեխանիզմների որինակներ: Շարժական և անշարժ բլոկ:

Պոլիսպաստ: Բարձրացվող ծանրության թեորետիկ հաշվումն ինկատի առնելով ոգտակար գործնեյության գործակիցը: Գլ-լանակի: Կամուրջ: Կարեստան:

Ատամնավոր անիդներ. Փոխանցիկ թիվ: Լեբետկա: Բարձրացվող ծանրության հաշվումը տեսական և պրակատիկ կերպով: Փոկային հաղորդում: Հաստոցի վրա կատարվող շարժման հաղորդման սխեմայի քննարկում:

Թեք հարթություն: Նրա ոգտագործման յերկու յեղանակը: Թեք ճանապարհներ: Սեպ: Սեպաձև մամուլ: Զգվող սեպաձև կողպեքներ: Պտուտակ. պտուտակային գիծ, պտուտակային կարգածք: Պտուտակների տեսակները և նրանց գործակը թյունը: Պտուտակվար բեռնաբարձ, պտուտակային մամուլ: Ուժերի հաշվումը: Պտուտակը գորպես փոխադրության միջոց. պտուտակի գործադրությունը խառատագործական հաստոցի (դազգյան) համար: Նավի և սավառնակի պտուտակները: Վորդ-նաձև հաղորդում: Հաղորդվող ուժերի հաշվումը տեսականութեն և գործնակորեն:

Յուցադրումներ յև լաբարատորային աշխատանքներ

1. Շարժական և անշարժ ճախարակների (բլոկների) հավասարակշռության որենքների ուսումնասիրությունը:

2. Հավասարակշռությունը թեք հարթության վրա:

3. Պտուտակի գործնեյության ուսումնասիրությունը (գոնեատրացինկայի վրա):

4. Նույնի վրա գտնել պտուտակի ոգտակար գործնեյության գործակիցը (լավ և փորձը կրկնել, պտուտակի վրա կարծառ (տալքօ) ածելով):

5. Գծագրել փոկային հաղորդման գասարանական աղյուսակ և նույնի վրա (ըստ չափերի) գտնել պտույտների քանակների մեջ յեղած փոխհարաբերությունները:

6. Գծագրել պարզ և բարդ լեբեդկայի ատամնավոր հաղորդման սխեմա և կատարել հաղորդվող ուժերի հաշվումը:

7. Կազմել հաստոցի վրա կատարվող շարժման հաղորդման սխեման և այդ գծագրով հաշվել հաղորդվող արագությունները, ուժերը:

8. Գծագրել ծորակի փոխանցման սխեմա (ավելի լավ և վոլորապտույտ ձուլաբանի):



copy

Ultra

Ultra

Ultra

Ultra

Ultra

Ultra

copy